

101. ԴԵՐԻՆ ՍԸՎԸՑՐԵՆ, ԴԻՐԸԿՆԳԱՆԸ ՍԻՊՏԸԿՑՐԵՆ

Մին շենում մին դեր ա ինում։ Էտ դերին աշկը մին նոր փսակված թանգ հառհնու փոնում ա։ Հիթը վրեր էտ հառհնը ճուրն ա քյինում, էտ դերը տրա առաչը կտրում ա, աշկավ ա անում, մրքան փոնում, հազում, հինչ վրեր պեն ա օգում հըսկըցնըն։ Էտ հառհնն էլ քյինամ ա տոն, ամմըեն հինչ մարթին ասում։ Մըրթըկնեգյ մըալըհաթ ըն անում, վրեր դերին քյաչագյ կյանն։

Էտ հառհնը նորըմինան ճուրը քյինանլիս դերը կյամ ա հըդեցըեն մաչակ տըեղը վրեննը կենում, հառհնը մուտանում ա, ասում.—Տեր հայր, մարթըս հանգ ա քյեցալ, տանը մենակ ըմ մնացալ, թա օգում ըս ինձ նհրեստ ինիս, մին լավ պադրաստություն քաշի, քըզնհրեստ էլ հենգյհարուր մանեթ եր կալ, եք մրեր տոն։ Դերն ասում ա.—Հիթ կյա՞մ։ Հառհնը ասում ա.—Ուրանգյան կըկյանա։

Դերը վրեր քյինամ ա տոն, հիզըրվում ա տես-տենը յոր օնում, վրեր ուրանգյունը հզե ինի։ Դիրանկենը կյամ ա էտ հառհնեն կոշտը, ըսկսում նհրեստը քախտր զրուց անբելը։ Հառհնեն հըրցնում ա, թա էտ հինչ ը՞ս օտում, վրեր էտքան զաշանգյ ըս, էտքան սիպտակ, հենց ըս լիհա պեմբանկ ինիս։ Էտ հառհնը ասում ա.—Դիրանկեն, ես քըզանա սըև ըմ իլալ, իմ մարթիս ծրեռքն ինձ ամմըեն օր նի յա կյամ, գյուդում չըմ հո՞ւնց ա նի կյամ, վրեր սիպտակում ըմ, թա օգում ըս ինձ մնան տու վրէլ սիպտակես, կըքյի-

նաս տոն, մին լավ պատրաստություն կըքաշիս, քըզ նհըետ էլ հազզար մանեթ փող կըպիրիս, ես իմ մարթիս կասըեմ, քեզ մին լավ կըղըշընգյցնե, կըտըռնաս պիմբակա էլ սիպտակ։ Դիրակենը հըրցնում ա, թա՝ հի՞ր կյամ, հառհնը ասում ա.—Էքյուծ ուրուգյունը կըկյաս տոն, քեզ յիշըլական ըմ։

Հառհնը ճիրան կյամ ա տոն, ուրուգյունը դերը ծըեռքեն մին յալլեխ տեսավ-տենավ լիգյը կյամ ա էտ հառհնեն տոռնը թակում, հառհնը տոռնը պենում ա, դերը նի յա մենում, յալլեխը տինում ըստոլեն, հենգյհարուր մանեթն էլ տամ ուրան, հառհնը ճուր ա թըքցնում, դերին ասում.—Ճալա սուրթա մին լավ ըղաց, ետնան բիրադի հաց կընստենքյ։

Դերը շորերը հանում ա, նի մենում տըշտակեն մաչը՝ թա ըղանա, բուրգան տոռնը թակում ըն, հառհնը ասում ա.—Վա՜յ, մարթըս եկալ ա։ Դերն ասում ա.—Պա ես հինչ ա՞ նըեմ։ Հառհնը դերին կըլխըեն սըև նոթ ա ածում, ջանը սուվըցնում, թողում մենակ սիպտիկի տալիս կըռքընեն նան աշկերը, դերին պատին տակըեն վըեննը կըցընում, լամբը նի կըցնում, տինում կըլխըեն։ Էտ վախտը հառհնեն մարթը տոռնը պենում ա, նի մենում, ասում.—Ա՜ կնեգյ, հինչ լավ պատրաստություն ըս քաշալ, նստըե մին լավ օտըեննքյ-խմըեննքյ, քյեֆ անըեննքյ։

Մըրթըկնեգյ նստում ըն թա չէ, դիրակենը բուրգան նի յա մընում, ծըեռքեն մին կապած մըեծ յալլըեխ։ Հազզար մընեթին նհըետ յալլըեխը տինում ա ըստոլըեն, ասում.—Հունց ըրա, վըեր ես էլ կնգանըտ մնան դիշինգյանամ, իմ իրեսըս էլ ինդի սիպտակ ինի։ Տա դիրըկնգանը քաշում ա լամբըեն լոնին տակը, ուրան ասածն անում, ետնան էլ ասում.—Դիրակեն, մեհենգյ ըրխըյին քյինա՜ ծըեր տոն, համ ղըշընգյացալ ըս, համ սիպտակալ...

Դիրակենը քյինում ա ուրանց տոն, տահանք մըրթըկնեգյ նստում ըն հաց օտում, ըստոլը հըվաքում։ Ետնան մարթն ասում ա.—Ա՜ կնեգյ, մենաս ինգյալ ա քեզ հըրցնեմ, էն պատին տակըեն սըև պենը հինչ ա՞։ Հառհնը ասում ա.—Լամբըեն տակըեն տինիլի սարք ըմ բըզարան ինքյ կալալ, տըեղ չի կար, վըեր լամբը տինիմ, մեհենգյ տըես հո՞նց ա լավ լոնս տամ։ Մարթն ասում ա.—Ա՜ կնեգյ, պա էն նըե՞րքինը հինչ ա, կնեգյը թա՝ լամբըեն փիթիլքաշին ա։ Մարթն ասում ա.—Փիթիլքաշին լամբըեն յիրա՜ կինի՞, թա սարքըեն յիրա՜, տրա շինող ուստըեն հերն անիծած, քյինամ ցակատը պիրիմ կտրըեմ, ուրան տըեղան տամ։

Մարթը վըեր տոռնը պենում ա, տոնս կյամ թա քյինա՜ ցա-

կատը պիրի, հառհնը գերին մուտանում ա, ասում.—Ճեպ ըրա փախբեր, թա չէ, մարթըս ցակատը ծընոքեն էս սհաթըս կյիլնա՝ կան ա։

Դերը զոռավ ըտրեզատ տունա ա պըրծնում, սըվացած, քըրտնքնքում կորած, տըկլոր փախնում, կյամ ուրանց տոն։ Դիրակենը վըեր տըեսնում ա, ասում ա.—Վա՜յ, քուտանամ, էտ վըերդե՞ղ ըս իլնալ։ Դերն ասում ա.—Սուս ըրա, մարթ գյիդմ վուչ, վըերդեղ քեզ սիպտըկցրալ ըն, ընդըեղ էլ ինձ սըվըցրալ ըն...